«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտ.
խորհրդի 08.04.2021թ. թիվ 5 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-մայոր
Մ. Բաբայան
«____ » _____2021թ.

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) սովորողների պրակտիկայի նպատակները, խնդիրները, տեսակները, պրակտիկայի ծրագրի բովանդակությունը, կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները, պրակտիկայի ամփոփման և գնահատման ձևերը:

2. Կրթահամալիրի սովորողների պրակտիկան կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ոստիկանության /այսուհետ՝ Ոստիկանություն/ պետի հրամանով, սույն կարգով, պրակտիկայի ծրագրերով և այլ իրավական ակտերով:

3.Կրթահամալիրի սովորողների պրակտիկան մասնագիտական կրթության բաղկացուցիչ մաս է, որի կազմակերպումը և իրականացումն ուղղված է ուսումնառության ընթացքում սովորողի կողմից ձեռք բերած տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ամրապնդմանն ու զարգացմանը:

4.Պրակտիկայի տեսակները, տևողությունը ամրագրվում են ուսումնական պլանում, իսկ անցկացման ժամկետները՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով, իսկ հարգելի պատճառով պրակտիկային չներկայանալու, ուսանողական իրավունքների վերականգնման կամ այլ բուհից տեղափոխման դեպքում՝ անհատական ժամանակացույցով:

II. Պրակտիկայի նպատակները

5. Կրթահամալիրում պրակտիկայի նպատակներն են.

1) սովորողների կողմից ուսումնառության ընթացքում ստացված տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ամրապնդումը և զարգացումը,

2) հետագա մասնագիտական գործունեությունն ինքնուրույն իրականացնելու համար անհրաժեշտ այլ հմտությունների, կարողությունների և ունակությունների ձեռք բերումը:

III. Պրակտիկայի խնդիրները

6. Կրթահամալիրում պրակտիկայի հիմնական խնդիրներն են.

1) տեսական ուսուցման և մասնագիտական պրակտիկ գործունեության միջև կապի ձևավորման, ամրապնդման ու խորացման ապահովումը,

2) սովորողների կողմից մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գործնական հմտությունների ձևավորման միջոցով պրակտիկ նշանակություն ունեցող իրավիճակների գնահատման կարողությունների ձեռքբերումը,

3) Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրության ապահովումը:

IV. Պրակտիկայի տեսակները

7. Կրթահամալիրի ակադեմիայում, քոլեջում և ուսումնական կենտրոնում տարբերակվում են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, մասնագիտական, նախաավարտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական:

1) Ուսումնական պրակտիկան՝ Ոստիկանութան համապատասխան ստորաբաժանումների գործունեության ուսումնասիրության ապահովումն է, ինչպես նաև ուսումնառության ընթացքում սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքների ամրապնդումն ու խորացումն է, գործնական նշանակություն ունեցող մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորումը:

2) Մասնագիտական պրակտիկան՝ սովորողների մասնագիտական հմտությունների և փորձառության զարգացումն է, ինչպես նաև մասնագիտական ոլորտում ինքնուրույն աշխատելու կարողությունների ձևավորումը:

3) Նախաավարտական պրակտիկան՝ սովորողների տեսագործնական անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ամրապնդումն և զարգացումն է, ինչպես նաև պրակտիկ նշանակություն ունեցող իրավիճակների գնահատման կարողությունների ձեռքբերումը:

4) Գիտահետազոտական պրակտիկան՝ ինքնուրույն գիտական հետազոտությունների իրականացման հմտությունների ձևավորումն է և գիտահետազոտական գործունեության խթանումը:

5) Գիտամանկավարժական պրակտիկան՝ սովորողների կողմից մանկավարժական գործունեություն իրականացնելու կարողությունների և հմտությունների զարգացումն է, գիտամանկավարժական խնդիրները լուծելու համար ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու ունակությունների ձևավորումը:

V. Պրակտիկայի ծրագիրը

8.Պրակտիկայի ծրագիրը՝ սովորողների և պրակտիկայի ղեկավարների գործունեությունը կարգավորող կազմակերպամեթոդական փաստաթուղթ է:

9.Պրակտիկայի ծրագիրը կազմվում և քննարկվում է Կրթահամալիրի ամբիոնների (կրթաճյուղի) կողմից (սահմանված դեպքում՝ քննարկվում են ակադեմիայի, քոլեջի, ուսումնական կենտրոնի խորհուրդներում), համաձայնեցվում են Ուստիկանության համապատասխան վարչության հետ (բացառությամբ՝ գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկայի) և հաստատվում՝ Կրթահամալիրի պետի կողմից:

10. Պրակտիկայի ծրագիրը պետք է համապատասխանի մասնագետի որակավորման բնութագրիչների պահանջներին՝ հաշվի առնելով ապագա մասնագիտությունը և դրան համապատասխան պետական կրթական չափորոշիչը կամ մասնագիրը, որը անհրաժեշտության դեպքում վերանայվում է:

VI. Պրակտիկայի կազմակերպման և անցկացման պայմանները

11. Ուսումնական, մասնագիտական, նախաավարտական, գիտահետազոտական, գիտամանկավարժական պրակտիկաները կազմակերպում են Կրթահամալիրի պրակտիկայի համար պատասխանատու ստորաբաժանումները՝ Կրթահամալիրի պետի

հրամանի հիման վրա, որով նշանակվում են պրակտիկայի ղեկավարներ՝ Կրթահամալիրի ծառայողներից:

12. Ուստիկանության պետի հրամանով սովորողների պրակտիկան կազմակերպվում և անցկացվում է Ուստիկանության համապատասխան ստորաբաժանումներում, իսկ գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկան՝ Կրթահամալիրի պետի հրամանով՝ Կրթահամալիրում: «Ուստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման սովորողների պրակտիկան կարող է անցկացվել ինչպես Ուստիկանությունում, այնպես էլ Կրթահամալիրում: «Ուստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման սովորողների պրակտիկան Կրթահամալիրում կազմակերպվում է պրակտիկայի ղեկավարների կողմից ուսումնական պարապմունքների անցկացման ձևով:

13.Պրակտիկային նախորդող շաբաթվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման կողմից սովորողների և պրակտիկայի ղեկավարների համար կազմակերպվում է պրակտիկայի հրահանգավորում:

14.Սովորողները նախապես ապահովվում են պրակտիկայի ծրագրերով, իսկ ուսումնական, մասնագիտական և նախաավարտական պրակտիկա անցնող սովորողները նաև օրագրով (համաձայն՝ Հավելվածի 1-ի):

15. Պրակտիկայի ընթացքում վարվող և ավարտին ներկայացվող փաստաթղթերն են (բացառությամբ «Ուստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման սովորողների պրակտիկան Կրթահամալիրում անցկացնելու դեպքերի).

1) Պրակտիկայի օրագիրը: Պրակտիկայի անցկացման ընթացքում սովորողը վարում է օրագիր՝ դրանում նշելով պրակտիկայի յուրաքանչյուր օրվա արդյունքները: Պրակտիկայի յուրաքանչյուր օրվա ավարտից հետո օրագիրը ստորագրում է սովորողը և պրակտիկայի անմիջական ղեկավարը:

2) Սովորողի հաշվետվությունը: Սովորողի հաշվետվությունը ամփոփ տեղեկատվություն է պրակտիկայի ընթացքի և արդյունքների մասին և սովորողի կողմից պրակտիկայի արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններն են: Սովորողի հաշվետվությունը ստորագրում են սովորողը և պրակտիկայի անմիջական ղեկավարը (համաձայն՝ Հավելված 2-ի):

3) Սովորողի բնութագիրը: Սովորողի բնութագիրը պրակտիկայի անմիջական ղեկավարի կողմից կազմված և Ուստիկանության համապատասխան ստորաբաժանման պետի կողմից հաստատված և կնքված փաստաթուղթ է: Բնութագիրը պահվում է սովորողի անձնական գործում:

4) Ուսումնական գործը: Ուսումնական գործը պրակտիկայի ծրագրով նախատեսված և սովորողի կողմից կազմված համապատասխան փաստաթղթերի ամբողջություն է: Այն ներկայացվում է պրակտիկայի ավարտից հետո ծրագրով նախատեսված Կրթահամալիրի ստորաբաժանում:

5) Աշխատանքի վայրից տեղեկանք: Հեռակա ուսուցման ֆակուլտետի՝ առնվազն միջին խմբի պաշտոններ զբաղեցնող սովորողների պաշտոնը հավաստող փաստաթուղթ:

(5-րդ ենթակետը լրացվել է գիտական խորհրդի 14.12.2021 թ. որոշմամբ, արձ. թիվ 12)

16. Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը (բացի բնութագրից) պահվում են Կրթահամալիրի համապատասխան ամբիոններում, իսկ ուսումնական գաղտնի գործերը՝ հատուկ գրադարանում:

VII. Պրակտիկայի արդյունքների ամփոփումը և գնահատումը

17.Պրակտիկան ավարտվում է սահմանված ժամկետներում և գնահատվում է ուսումնական պլանում նշված ստուգման ձևին համապատասխան:

18.Պրակտիկայի արդյունքները ամփոփվում են ակադեմիայի, քոլեջի, ուսումնական կենտրոնի խորհուրդներում:

VIII. Անցումային դրույթներ

19. Սույն կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կրթահամալիրի գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՕՐԱԳԻՐ

(ուսումնական,մասնագիտական, նախաավարտական)

Սովորողի Ա.Ա.Հ. _____

Կուրս_____դասակ / խումբ _____

Մասնագիտություն_____

Պրակտիկայի անցկացման ստորաբաժանման անվանում

_____

Պրակտիկայի անմիջական ղեկավար _____

(Ա.Ա.Հ., պաշտոն)

Պրակտիկայի սկիզբ « » _____20…..թ.

Պրակտիկայի ավարտ « » _____20…..թ.

Երևան 20…..

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

« » _____20.....թ.

.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....

Սովորող _____ Պրակտիկայի անմիջական ղեկավար_____
(ստորագրություն) (ստորագրություն)

« » _____20.....թ.

.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....

Սովորող _____ Պրակտիկայի անմիջական ղեկավար_____
(ստորագրություն) (ստորագրություն)

« » _____20.....թ.

.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....

Սովորող _____ Պրակտիկայի անմիջական ղեկավար_____
(ստորագրություն) (ստորագրություն)

Հավելված 2

Սովորողի հաշվետվությունը և առաջարկությունները պրակտիկայի անցկացման վերաբերյալ

.....
.....
.....